Երջանիկները
ընթերցում են
և սրճում

AGNÈS MARTIN-LUGAND

Les gens heureux lisent et boivent du café

ROMAN

ԱՆՅԵՍ ՄԱՐՏԵՆ-ԼՅՈՒԳԱՆ

Երջանիկները ընթերցում են և սրճում

ՎԵՊ

Թարգմանությունը ֆրանսերենից՝
Հասմիկ Առաքելյանի

ԵՐԵՎԱՆ
2023

ՀՏԴ 821.133.1-31 Մարտեն-Լյուգան
ԳՄԴ 84(4Ֆր)-44
Մ 390

Մարտեն-Լյուգան Անյես
Մ 390 Երջանիկները ընթերցում են և սրճում: Վեպ / Ա. Մարտեն-Լյուգան; Թարգմանությունը ֆրանսերենից՝ Հ. Առաքելյանի.- Եր.: Newmag, 2023.- 208 էջ:

Այս պատմությունն անտարբեր չի թողնի սիրային դրամայի սիրահարներին: 30-ամյա Դիանան դժբախտ պատահարի հետևանքով կորցնում է ամուսնուն և 5-ամյա դստերը: «Երջանիկները ընթերցում են և սրճում» անունով գրական սրճարան ունեցող կնոջ համար կյանքը նույն պահին վերջանում է: Ինչպե՞ս ամոքել վիշտը, երբ ապրելու փոխարեն երազում ես մեռնել: Հոգեբան Անյես Մարտեն-Լյուգանը, այս վեպը գրելիս, գործի է դրել իր մասնագիտական հմտություններն ու ներթափանցել իր ստեղծած կերպարի հոգեվիճակի մեջ՝ ներկայացնելով փխրուն կնոջ ապրումների բոլոր երանգները:

ՀՏԴ 821.133.1-31 Մարտեն-Լյուգան
ԳՄԴ 84(4Ֆր)-44

ISBN 978-9939-967-04-2
Անյես Մարտեն-Լյուգան «Երջանիկները ընթերցում են և սրճում»
© 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ
© Éditions Michel Lafon 2013, Les Gens heureux lisent et boivent du café
Published by arrangement with Lester Literary Agency & Associates

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել Lester Literary Agency & Associates ընկերության հետ կնքած պայմանագրով:

— 1 —

— Մամ, խնդրում եմ:

— Կլարա, ասացի՝ ոչ:

— Դե լավ, Դիանա, թող գա հետս:

— Կոլեն, ինձ ապուշի տեղ ես դրել... Եթե Կլարան հետդ գա, ավելի երկար կմնաք, անիմաստ ժամանակ կկորցնեք, ու երեք օրով կհետաձգվի մեր արձակուրդը:

— Դե, դու էլ մեզ հետ արի, գլխներիս կանգնիր, հսկիր, որ չուշացնենք:

— Իհարկե, չեմ գա: Տեսել ես՝ դեռ ինչքան գործ ունեմ անելու, ճանապարհի վրա ենք:

— Ահա քեզ ևս մի պատճառ, որ Կլարային ինձ հետ տանեմ. հանգիստ գործերդ կանես:

— Մամ...

— Լավ, համոզեցիք, շուտ թռեք: Աչքիս չերևաք, քանի չեմ փոշմանել:

Նրանք աստիճաններով սլացան ներքև՝ ուրախ-զվարթ, քրքջալով:

Հետո իմացա, որ ավտոմեքենայում էլ են շարունակել կապիկություններ անել ճիշտ այն պահին, երբ բեռնատարը մխրճվել է մեր մեքենայի մեջ: Գիտեմ... Նրանք մահացել են քրքջալով, ժպիտը դեմքներին: Ա՛խ, ոնց կուզեի այդ պահին նրանց հետ լինել:

Մեկ տարի է անցել, ու մինչև հիմա ամեն Աստծո օր կրկնում եմ, որ կուզեի մեռնել նրանց հետ, բայց, ի դժբախտություն

ինձ, սիրտս համառորեն շարունակում է բաբախել ու ստիպել շնչել:

Բազմոցին փռված հետևում էի, թե ինչպես էին սիգարետիս ծխի քուլաներն օդում պար գալիս, երբ դուռը բացվեց: Ֆելիքսն այլևս հրավերի չէր սպասում ինձ այցելելու համար. կեսբերան ակնարկում էր կամ ընդհանրապես առանց զգուշացնելու գալիս էր իմ տուն: Եվ այսպես ամեն օր: Տեսնես ինչ էր խելքիս փչել, որ տանս երկրորդ բանալին նրան էի տվել:

Նրա հանկարծակի մուտքն ինձ ստիպեց վեր թռչել տեղիցս, ու մոխիրը շուռ եկավ գիշերազգեստիս վրա: Վրայիցս փչելով թափ տվեցի գետնին: Որպեսզի չտեսնեի, թե ինչպես էր Ֆելիքսն անցնում առօրյա կենցաղային գործերին, գնացի խոհանոց սրճելու, որ կոֆեինի օգնությամբ ուշքի գայի: Վերադարձիս սենյակում ոչինչ չէր փոխվել՝ մոխրամանը լիքն էր, կեղտոտ բաժակները՝ նույն տեղում, կերած ուտելիքի տուփերը և դատարկ շշերը թափված էին բազմոցի առջևի սեղանիկի վրա: Ֆելիքսը նստած էր ոտքը ոտքին գցած և սևեռուն նայում էր ինձ: Նրա այդ լուրջ կեցվածքը կես ակնթարթ շփոթեցրեց, բայց ամենից շատ ինձ զարմացրեց նրա հագուկապը: Եվ ինչո՞ւ էր կոստյումով, որտե՞ղ էր պարտակել իր ճղճղված ջինսը, որն ասես մշտապես սոսնձված էր հագին, ո՞ւր էր կորել մարմինն ընդգծող կիսաթև շապիկը:

— Այս տեսքով ո՞ւր ես գնում. հարսանիքի՞, թե՞ թաղման:

— Ժամը քանի՞սն է:

— Դա իմ հարցի պատասխանը չէր: Թքած ունեմ, թե ժամը քանիսն է: Այսպես պճնվել ես, որ քեզ golden boy՝ երևակայեմ:

— Երնեկ չէր... Լավ, հեչ: Ցերեկվա ժամը երկուսն է, պետք է լվացվես, հագնվես, քեզ կարգի բերես: Չես կարող այնտեղ այս տեսքով գնալ:

— Ո՞ւր պիտի գնամ:

— Արագացրո՛ւ: Քո և Կոլենի ծնողները մեզ են սպասում: Մեկ ժամից այնտեղ պիտի լինենք:

Մարմնովս սարսուռ անցավ, ձեռքերս սկսեցին դողալ, լեղիս կոկորդս բարձրացավ:

— Բացառվում է: Ես գերեզմանոց չեմ գնա: Լսո՞ւմ ես:

— Հանուն նրանց,– մեղմ ասաց Ֆելիքսը,– նրանց հարգանքի տուրք մատուցելու օրն է, մահվան առաջին տարելիցը: Բոլորը քեզ կսրտակցեն:

— Ես որևէ մեկի աջակցության կարիքը չունեմ: Չեմ ուզում մասնակցել հիշատակի այդ հիմար արարողությանը: Կարծում եք, որ նման բաների սիրտ ունեմ:

Չայնս դողաց. օրվա առաջին արցունքները հոսեցին աչքերիցս: Արտասուքի միջից տեսա, թե Ֆելիքսն ինչպես վեր կացավ ու շտապեց մոտս: Ինձ գիրկն առավ ու սեղմեց կրծքին:

— Դիանա, արի հանուն նրանց, խնդրում եմ:

Ֆելիքսին կտրուկ հրեցի:

---

* Golden boy (անգլ.՝ ոսկե տղա) – ամենամյա ֆուտբոլային մրցանակ, տրվում է Եվրոպայի՝ տարվա լավագույն երիտասարդ ֆուտբոլիստին, որի տարիքը չպետք է գերազանցի 21-ը: Նա պետք է հանդես գա եվրոպական առաջնությունների բարձրագույն դիվիզիոններից մեկում: Օրինակ՝ այդ մրցանակին ժամանակին արժանացել են Լեոնել Մեսսին, Պոլ Պոգբան, Կիլիան Մբապպեն: (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

— Ասացի՝ ոչ, խլացել ես: Վեր կաց, գնա՛ այստեղից,– հեկեկալով բղավեցի, երբ նկատեցի, որ նա կրկին ինձ է մոտենում:

Վազեցի սենյակս: Ձեռքերս դողում էին, բայց դուռը փակեցի, բանալին երկու անգամ պտտեցի: Փլվեցի... Մեջքս դռանը հենած, ոտքերս կրծքիս մոտ ծալած՝ նստեցի գետնին: Ֆելիքսի ծանր հոգոցը խախտեց բնակարանիս լռությունը:

— Երեկոյան նորից կգամ:

— Երեսդ տեսնել չեմ ուզում:

— Գոնե փորձիր լողանալ, հակառակ դեպքում, ուզես թե չուզես, ստիպված կլինեմ քեզ մտցնել ցնցուղի տակ:

Նրա ոտնաձայները հեռացան: Դռան շրխկոցից հասկացա, որ Ֆելիքսը վերջապես գնաց:

Այդպես, գլուխս ծնկներիս դրած, բավական երկար մնացի, մինչև հայացքս ընկավ անկողնուս: Չորեքթաթ, դժվարությամբ հասա, ինձ գցեցի մահճակալիս վրա ու վերմակով փաթաթվեցի: Ինչպես միշտ, երբ անկողնումս էի «ապաստան գտնում», քիթս փնտրում էր Կոլենի հոտը: Այս անգամ էլ հոտոտեցի, փորձեցի որսալ, բայց չկար: Արդեն գրեթե անհետացել էր, մինչդեռ նրա մահից հետո ոչ մի անգամ սպիտակեղենը չէի փոխել: Ուզում էի նորից զգալ այդ հոտը: Ուզում էի մոռանալ հիվանդանոցի, մահվան այն հոտը, որն առել էի, երբ վերջին անգամ նրա վզով էի ընկել: Ասես այն ներծծվել էր նրա մաշկի մեջ:

Ուզում էի քուն մտնել. դա լավագույն ցավազրկողն էր:

Մի տարի առաջ, երբ Ֆելիքսի ուղեկցությամբ գնացել էի շտապ օգնության կայան, ինձ ասել էին, որ արդեն ուշ է. դուստրս մահացել էր անմիջապես շտապ օգնության մեքենայում: Բժիշկները պարզապես ինձ ժամանակ էին տվել, որ ուժեղ սթրեսից

կարողանայի փսխել, ընկալեի կատարվածը, ինչից հետո տեղեկացրին, որ Կոլենի համար կյանքը կորցնելը րոպեների կամ ժամերի հարց է: Թե ցանկանում էի նրան հրաժեշտ տալ, ապա պետք է շտապեի. կորցնելու ժամանակ չկար: Ուզում էի ոռնալ, գոռալ, ասել, որ ինձ խաբում են, բայց ուժ չունեի: Իրական մղձավանջի մեջ էի, շատ էի ուզում հավատալ, որ սա վատ երազ է, շուտով պիտի արթնանամ, որ սա իրականություն չէ: Ցավոք, մի բուժքույր ինձ ուղեկցեց վերակենդանացման բաժանմունք, որտեղ Կոլենն էր: Այն պահից սկսած, երբ ոտք դրեցի այդ սենյակ, յուրաքանչյուր բառ, յուրաքանչյուր ժեստ, ամեն ինչ դրոշմվեց հիշողությանս մեջ: Կոլենն այնտեղ էր, ինչ-որ մահճակալի վրա պառկած, նրան միացված էին մի գլուխ տարբեր սարքավորումներ, որոնք աղմուկ էին հանում, ծնգծնգում, իսկ դեմքն ամբողջությամբ կապտուկներով էր պատված: Այդ տեսարանից քարացել-մնացել էի: Ինձնից հետո Ֆելիքսն էր սենյակ մտել, թիկունքիս էր կանգնել ու թույլ չտվեց, որ տապալվեմ գետնին: Կոլենը գլուխը թեթևակիորեն թեքել էր իմ ուղղությամբ, աչքերն ինձ էր հառել, նույնիսկ դեմքին ժպիտ նկարելու ուժ էր գտել: Այդ ժպիտն ինձ թույլ տվեց մոտենալ նրան: Վերցրի ձեռքն ափիս մեջ, նա արձագանքեց սեղմելով ձեռքս:

— Հիմա պիտի Կլարայի հետ լինես,– դժվարությամբ արտաբերեց նա:

— Կոլեն, Կլարան…

— Նա վիրահատարանում է,– ընդհատեց Ֆելիքսը:

Գլուխս դարձրել էի դեպի Ֆելիքսը. նա, հայացքն ինձնից փախցնելով, ժպտում էր Կոլենին: Այս ամենից ականջներումս խշշոց առաջացավ, մարմնիս յուրաքանչյուր բջիջ սկսեց դողալ, տեսողությունս մթագնեց: Զգացի, որ Կոլենը

ձեռքս ավելի ուժեղ էր սեղմում: Նրան էի նայում, մինչ նա լսում էր Ֆելիքսին, որը Կլարայի վիճակի մասին էր պատմում, բացատրում էր, որ անպայման ապաքինվելու է: Այս սուտն ինձ կտրուկ իրականություն վերադարձրեց: Կցկտուր ձայնով Կոլենը պատմեց, որ ինքը բեռնատարը չի նկատել, քանի որ վթարի պահին Կլարայի հետ երգելիս է եղել: Խոսելու կարողությունս կորցրել էի: Կռացել էի, մատներս սահեցրել նրա մազերի մեջ, շոյում էի ճակատը: Նա դեմքը կրկին իմ կողմ էր թեքել: Արցունքներն աչքերս ողողել էին, չէին թողնում, որ նրա դիմագծերը պարզ տեսնեի: Կոլենը սկսեց մարել... շնչահեղձ էի լինում: Ձեռքը բարձրացրել էր, որ այտիս հպվի:

— Շշշ, սուս, սիրելի՛ս,– ասաց նա,– հանգստացիր, լսեցիր չէ՞ Ֆելիքսին, Կլարան շուտով քո կարիքը կունենա:

Ոչ մի կերպ չկարողացա խույս տալ նրա հայացքից, որը լցված էր մեր դստեր՝ ոտքի կանգնելու մեծ հույսով:

— Իսկ դու...,– միայն հասցրի արտաբերել:

— Նա՛ է կարևորը,– ասաց՝ այտիցս արցունքի մի կաթիլ սրբելով, սակայն դրանից հետո հեկեկոցս ավելի ուժգնացավ: Դեմքս հենել էի նրա ափին, որը դեռ տաք էր: Կոլենը դեռ ողջ էր: Դեռ: Ես կառչում էի այդ՝ ԴԵՌ բառից:

— Կոլեն, ես չեմ կարող քեզ կորցնել,– շշնջացի ականջին:

— Դու միայնակ չես, Կլարան քեզ հետ է, իսկ Ֆելիքսը շուտով ձեր մասին հոգ կտանի:

Գլուխս շարժեցի ի նշան համաձայնության, սակայն չհամարձակվեցի նայել նրա աչքերին:

— Սիրելի՛ս, ամեն ինչ կանցնի: Դու ուժ կգտնես քո մեջ՝ հանուն մեր դստեր:

Նրա խոսքը հանկարծ ընդհատվեց, ես խառնվեցի իրար, գլուխս բարձրացրի: Կոլենը գերհոգնած էր երևում: Նա սպառեց վերջին ուժերն ինձ համար, ինչպես միշտ... Սոսնձվելու նման գրկեցի նրան ու համբուրեցի, ինձ պատասխանեց իր մեջ մնացած կյանքի վերջին նշույլով: Պառկեցի նրա կողքին, օգնեցի, որ գլուխը դնի վրաս: Քանի դեռ գրկումս էր, չէր կարող ինձ լքել: Վերջին անգամ շշնջաց, որ սիրում է ինձ, ու մինչև նրա խաղաղ ննջելը հասցրեցի պատասխանել: Ժամեր շարունակ նրան այդպես կրծքիս վրա պահեցի, օրորեցի, համբուրեցի, խորը ներս քաշեցի նրա մաշկի հոտը: Ծնողներս փորձեցին ինձ այնտեղից հեռացնել, ճչացի: Կոլենի ծնողները նույնպես եկել էին, սակայն ոչ ոքի թույլ չտվեցի անգամ նրան մոտ գալ: Նա միայն իմն էր: Ֆելիքսի համբերության բաժակը լցվեց, և փորձեց համոզել զիջել: Հուշեց, որ դեռ պիտի Կլարային էլ հրաժեշտ տամ: Մոլորակի վրա դուստրս միակ մարդն էր, որը կարող էր ինձ Կոլենից բաժանել: Մահը ոչինչ չէր փոխել: Ձեռքերս թուլացան, ու բաց թողեցի Կոլենի դին: Շրթունքներս վերջին անգամ հպեցի նրա շուրթերին ու գնացի:

Կլարայի մոտ տանող ճանապարհին գլուխս մշուշի մեջ էր: Արձագանքեցի միայն դռան մոտ:

— Ո՛չ,– ասացի Ֆելիքսին,– չեմ կարող:

— Դիանա, պիտի՛ նրան տեսնես:

Աչքերս դռանը հառած՝ մի քանի քայլ հետ քաշվեցի, ինչից հետո արագ փախա՝ հիվանդանոցի միջանցքներով վազելով: Հրաժարվեցի դստերս մեռած տեսնել: Ուզում էի հիշել միայն նրա ժպիտը, նրա գանգուր, շեկ մազերը, որոնք պար էին գալիս դեմքին, չարաճճիությունից պսպղացող աչքերը

ճիշտ այնպես, ինչպես առավոտյան էին, երբ հոր հետ տնից դուրս եկավ:

Այսօր, անցնող մեկ տարվա յուրաքանչյուր օրվա նման, լռություն էր տիրում մեր տանը. այլևս չկա երաժշտություն, չկան խինդ ու ծիծաղ, անվերջ թվացող զրույցներ...

Քայլերս ինձ տարան Կլարայի ննջասենյակ: Այնտեղ ամեն ինչ վարդագույն էր: Հենց այն պահից, երբ իմացա, որ աղջիկ ենք ունենալու, «հրաման էի արձակել», որ նրա սենյակն ամբողջությամբ պետք է այդ գույնի լիներ: Կոլենը ֆենոմենալ հնարքների էր դիմել, որ ինձ համոզեր մտափոխվել, բայց չզիջեցի:

Այնտեղ ոչնչի ձեռք չէի տվել՝ ոչ մի կողմ նետված ու բուրգի տեսք ստացած ծածկոցին, ոչ ննջասենյակի չորսբոլորը շաղ տված խաղալիքներին, ոչ հատակին նետած գիշերանոցին, ոչ անիվներով ճամպրուկին, որտեղ իր տիկնիկներն էր շարել արձակուրդին հետը տանելու համար: Միայն երկու փափուկ խաղալիք այլևս այնտեղ չէին. մեկը դուդուն* էր, որին իր հետ էր վերցրել վերջին անգամ տնից դուրս գալիս, մյուսն էլ ինձ մոտ էր. դրա հետ էի քնում վերջին մեկ տարում:

Լռության սենյակի դուռը նորից փակելուց հետո գնացի, Կոլենի զգեստապահարանից մի նոր վերնաշապիկ հանեցի:

Դեռ նոր էի փակվել լոգարանում ու մտել ցնցուղի տակ, երբ լսեցի՝ Ֆելիքսը վերադարձավ: Այստեղ մի մեծ սավան ծածկում էր հայելին, պահարանի դարակներում Կոլենի օծանելիքի շշերից բացի ուրիշ ոչինչ չկար: Կանացի որևէ իր չկար՝

* Դուդու (ֆր.՝ doudou) - որևէ փափուկ խաղալիք, որի հետ փոքրիկները քնում են և որից դժվարությամբ են բաժանվում նաև ցերեկը:

ոչ հարդարանքի պարագաներ, ոչ խնամքի միջոցներ, ոչ զարդեղեն:

Լոգարանի հատակի սառը սալիկները հեչ պետքս չէին, ոտքերս չէին մրսում, ցնցուղի ջուրը վրայովս էր հոսում, բայց մարմինս դրանից չէր թուլանում, հանգստանում: Ափիս մեջ լցրեցի Կլարայի՝ ելակի հոտով շամպունը: Այդ քաղցր հոտը մի քանի արցունք պոկեց ինձնից, բայց նաև փոխանցեց մռայլ սփոփանք:

Ամենօրյա «ծիսակարգս» կրկնեցի. ցանեցի Կոլենի օծանելիքը՝ որպես առաջին վահան, հետո վերնաշապիկի կոճակները կոճկեցի՝ որպես երկրորդ վահան, հագա նրա գլխանոցով բլուզը՝ որպես երրորդ վահան: Թաց մազերս կապեցի, որ ելակի հոտը երկար պահպանվի. դա էլ չորրորդ վահանն էր:

Հյուրասենյակում թափածս աղբն անհետացել էր, պատուհանները բաց էին, բնակարանն օդափոխվում էր: Խոհանոցում ասես պատերազմ ընթանար: Ֆելիքսի մոտ գնալուց առաջ նորից փակեցի հյուրասենյակի պատուհանները, վարագույրը քաշեցի. խավարն իմ լավագույն բարեկամն էր: Ֆելիքսի գլուխը սառցախցիկի մեջ էր, իսկ ես հենվել էի դռան եզրին ու նրան էի հետևում: Նա նորից իր «համազգեստն» էր հագել և սուլելով հետևն էր շարժում:

— Կարո՞ղ եմ իմանալ՝ ինչի համար ես այդքան լավ տրամադրությամբ:

— Նախորդ գիշերվանից է: Թույլ տուր՝ ընթրիքը պատրաստեմ, հետո քեզ ամեն ինչ կպատմեմ:

Նա շրջվել ու ինձ էր զննում: Մոտեցավ ու մի քանի անգամ խորը հոտ քաշեց ինձնից:

— Վերջ տուր շան պես հոտոտելուդ,– ասացի:

— Պիտի այս ամենին վերջ տաս, էլ չշարունակես...

— Ինչից ես դժգոհում, հիմա էլ հո լվացվել եմ:

— Ինձ լյուքս դասի ծառայություն չես մատուցել դրանով:

Այտս համբուրեց ու գնաց իր գործերով:

— Էդ երբանից եփել-թափել գիտես:

— Չգիտեմ, պարզապես միկրոալիքային վառարանն եմ միացրել: Դեռ պիտի ինչ-որ համեղ բան գտնեմ, որ կրծոտենք: Քո սառնարանն ավելի ահավոր է, քան Գոբի անապատը:

— Եթե քաղցած ես, պիցցա պատվիրիր: Ինչ էլ ձեռքիդ տակ ընկնի, չես կարող պատրաստել: Դու չես կարողանա նույնիսկ սառեցված կիսաֆաբրիկատ ուտելիք պատրաստել:

— Դուք եք մեղավորը: Վերջին տասը տարիներին դու և Կոլենն եք ինձ կերակրել: Բայց ինչ հանճարեղ միտք տվեցիր. այսուհետև քեզ ավելի շատ ժամանակ կնվիրեմ:

Գնացի, փռվեցի բազմոցին: Պիտի լսեի Ֆելիքսի անցկացրած ֆանտաստիկ գիշերվա մասին պատմությունը: Հանկարծ կարմիր գինի հայտնվեց սեղանին: Ֆելիքսը եկավ-տեղավորվեց դիմացս ու ինձ փոխանցեց ծխախոտի տուփը: Անմիջապես մի գլանակ վառեցի:

— Ծնողներդ քեզ համբույրներ են ուղարկում:

— Ավելի լավ իրենց համար,– պատասխանեցի՝ ծուխը փչելով իր ուղղությամբ:

— Անհանգստանում են քեզ համար:

— Իզուր:

— Շատ են ցանկանում քեզ այցելել:

— Իսկ ես չեմ ցանկանում: Ի դեպ, կարող ես քեզ երջանիկ զգալ, դու միակն ես, որին կարողանում եմ հանդուրժել:

— Դե, ես անփոխարինելի եմ: Կողքովս անտարբեր անցնել չես կարող:

— Դե-դե, Ֆելիքս:

— Լավ: Եթե դեռ հավես ունես, ապա քեզ ամենայն մանրամասնությամբ կպատմեմ անցած գիշերվա մասին:

— Օ՛հ, ոչ, ամեն ինչ, բացի քո սեռական կյանքի մանրամասներից:

— Այդ դեպքում ինձ ասա՝ ինչ ես նախընտրում. հիմա իմ խենթություններից խոսեմ, թե՞ քո ծնողներից:

— Դե լավ, պատմիր: Լսում եմ:

Մանրուքներ նկարագրելու համար խելքն իրենը չէր: Նրա համար կյանքը մի մեծ տոնախմբություն էր՝ համեմված անզուսպ սեքսուալ ակտիվությամբ և ալկոհոլային խմիչքների նորույթներ փորձելով: Իր պատմություններով տարված՝ անգամ ի վիճակի չէր լսել իմ արձագանքները: Անդադար խոսում էր: Չլռեց նույնիսկ, երբ դռան զանգը հնչեց:

Առաքիչը նույնպես իմացավ, թե ինչպես էր հայտնվել 20-ամյա մի ուսանողի անկողնում, որի կրթությամբ ինքն էր զբաղվում:

— Դու միայն պիտի առավոտյան տեսնեիր այդ խեղճ դեղնակտուցին, թե ինչպես էր ինձ խնդրում մնալ: Մեղքս եկավ,- ասաց Ֆելիքսը՝ ձևացնելով, թե աչքից արցունք է սրբում:

— Բայց ինչ զզվելի ես:

— Ես զգուշացրել էի: Ուրիշ ինչ ես ուզում, երբ Ֆելիքսի համը փորձում են, մաստակի նման կպչում են նրան:

Հազիվ էի հասցրել երկու-երեք կտոր պիցցա ուտել՝ նա ամբողջը կուլ տվեց անկուշտի նման: Զգացի, որ գնալու